Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1951 *Общественные науки*

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լրացավ Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության լույս ընծայման մեկ տարին։ Ընկեր Ստալինի այս աշխատությունը, որը խոշորագույն ավանդ է մարքսիզմ-լենինիզմի դանձարանում, դարագլուխ բաց արեց սովետական գիտության զարգացման մեջ և նշեց լեզվագիտության հետագա վերելքի ուղիները։

Բացահայտելով Ն. Յա. Մառի այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքի» իդեալիստական, հակամարքսիստական էությունը, ընկեր Ստալինը պատմական հարուստ փաստական նյութի ամենախորը ընդհանրացումներով հիմք դրեց կուռ, հետևողական մարքսիստական լենինյան լեզվաբանական ուսմունքին։

Ընկեր Ստալինը բացահայտեց լեզվի, որպես հասարակական երևույթի, սպեցիֆիկ առանձնահատկությունները, ցույց տվեց Մառի և նրա աշակերտների մոլորության ողջ խորությունը։ Ընկեր Ստալինը հիմնավորեց այն ճշմարտությունը, որ լեզուն վերնաշենք չէ, որ նա ծնունդ չի առել այս կամ այն բազիսից, այլ հանդիսանում է հասարակության պատմության ամբողջ ընթացքի արդյունք։ Լեզուն ստեղծվել է ոչ թե մի որևէ դասակարգի, այլ ամբողջ հասարակության կողմից։ Այստեղից հետևում է, որ այս կամ այն բազիսի կործանումը չի կարող հասցնել հին լեզվի ոչնչացման և նոր լեզվի թռիչքային առաջացման։

Ընկեր Ստալինը սուր քննադատության ենթարկեց Ն. Յա. Մառի հակագիտական դրույթները լեզվի դասակարգայնության մասին և ցույց տվեց, որ, ի տարբերություն վերնաշենքային երևույթների, լեզուն սպասարկում է ոչ թե մեկ որևէ դասակարգի, այլ հավասարապես սպասարկում է հասարակության բոլոր անդամներին՝ անկախ նրանց սոցիալական դրությունից։

Մերկացնելով լեզվի իդեալիստական անջատումը հասարակության պատմությունից, ընկեր Ստալինը ցույց տվեց, որ հասարակությունից դուրս չկա լեզու և հետևապես՝ չի կարելի հասկանալ լեզվի զարգացման օրենքները հասարակության պատմությունից անջատ, կտրված տվյալ ժողովրդի պատմությունից։

Ընկեր Ստալինը ցույց տվեց Մառի՝ լեզուն մտածողությունից կտրելու փորձերի հակագիտական, իդեալիստական էությունը, ընդգծելով, որ անհնարին է մտքի գոյությունը առանց նրա լեզվական թաղանթի, առանց լեզվի «բնական նյութի»։

Մեր մեծ ուսուցչի հանճարեղ աշխատության մեջ իրենց լուծումն են ստացել լեզվաբանության այնպիսի արմատական հարցեր, ինչպես լեզվի քերականական կառուցվածքի, նրա բառարանային կազմի հիմնական բառային ֆոնդի՝ լեզվի այդ էական տարրերի զարգացման օրինաչափության հարցերը։

Մեծ է ընկեր Ստալինի ուսմունքի նշանակությունը դասակարգային և տերիտորիալ բարբառների մասին, նրանց էական տարբերությունների մասին, ազգային լեզուների ձևավորման ընթացքում նրանց տարբեր դերի մասին, տե-

ռիտորիալ բարբառների և համաժողովրդական լեզվի միջև եղած փոխադարձ կապերի մասին։

Անչափ մեծ է ընկեր Ստալինի աշխատության ուղենիշ գաղափարների դերը սովետական լեզվաբանության հետագա զարգացման համար։

Սակայն ստեղծագործական մարքսիզմի այդ հոյակապ աշխատության նշանակությունը ամենևին չի սահմանափակվում լեզվաբանության շրջանակներով. նրա հրապարակ գալը նշանավորեց մարքսիստական փիլիսոփայության՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հետագա զարգացումը։

Լեզվաբանական իդեալիզմի դեմ մղած պայքարում ընկեր Ստալինը խորացրեց մտածողության էության, նրա առանձնահատկությունների դիալեկտիկական-մատերիալիստական ըմբռնումը։

Նա զարգացրեց, ճշտեց և կոնկրետացրեց դիալեկտիկական մեթոդի հիմնական գծերին վերաբերող ուսմունքը և հատկապես քանակական փոփոխությունների նոր որակի անցման օրենքին վերաբերող ուսմունքը։

Նա ցույց տվեց, որ մի որակից թռիչքաձև մյուսին անցումը միշտ չէ, որ պայթյունի բնույթ է ստանում, որ այդ պայթյունը, հնի մեկ անգամից ոչնչացումը և նորի կառուցումը տեղի չի ունենում ոչ միայն լեզվի, այլև բազիսային կամ վերնաշենքային կարգի բազմաթիվ այլ երևույթների զարգացման մեջ։

Ընկեր Ստալինի այդ ցուցումն ունի տեսական և գործնական հսկայական նշանակություն՝ սոցիալիստական հասարակակարգի զարգացման առանձնահատկությունների ըմբռնման համար։

«Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության մեջ ընկեր Ստալինը ստեղծագործորեն զարգացրեց բազիսի և վերնաշենքի մասին մարքսիստական-լենինյան ուսմունքը։ Նա ցույց տվեց վերնաշենքի ակտիվ դերը իր բազիսի ամրապնդման գործում և նրա անհաշտ վերաբերմունքը դեպի թշնամական բազիսը և թշնամական վերնաշենքը։ Որ բազիսի հանդեպ վերնաշենքի ծառայական-դասակարգային դերի մեջ ընկեր Ստալինը բացահայտեց վերնաշենքի էական հատկությունը։ Բավական է միայն, որ վերնաշենքը իր բազիսի ակտիվ պաշտպանության դիրքից անցնի նրա նկատմամբ անտարբեր վերաբերմունքի դիրքին,— սովորեցնում է ընկեր Ստալինը,— բավական է միայն, որ վերնաշենքը նույնանման վերաբերմունք ունենա դեպի հակամարտ դասակարգերը, որպեսզի նա կորցնի իր հիմնական որակը և դադարի վերնաշենք լինելուց։

Այդ հանճարեղ բնորոշումները հանդիսանում են տեսական հիմնավորումներ՝ սոցիալիստական վերնաշենքի անշեղ ամրապնդման անհրաժեշտության համար, պարտիայի և սովետական պետության՝ սոցիալիստական բազիսի ստեղծման, ամրապնդման և աստիճանաբար զարգացման այդ հիմնական վճռական լծակների՝ հզորացման համար։

Վերնաշենքի ծառայական դասակարգային դերի մասին ընկեր Ստալինի ուսմունքից բխում է, որ սոցիալիստական վերնաշենքի բաղկացուցիչ տարրերը՝ սովետական գիտությունը, փիլիսոփայությունը, գրականությունը, արվեստը, էթիկան կոչված են է՛լ ավելի ամրապնդելու սոցիալիստական բազիսը, սուր, անհաշտ պայքար մղելու կապիտալիստական բազիսի և նրա վերնաշենքի դեմ։

Ընկեր Ստալինի ուսմունքը վերնաշենքի մասին՝ տեսական հիմնավորում

է հանդիսանում այն անշեղ և հետևողական պայքարի, որը մղում է բոլշևիկյան պարտիան իդեոլոգիական ֆրոնտում բուրժուական օբեկտիվիզմի, ապոլիտիզմի, անպարտիականության, դեպի ռեակցիոն բուրժուական կուլտուրան հաշտվողական վերաբերմունքի բոլոր ձևերի դեմ։

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը մահացու հարված հասցրեց դոգմատիզմին և տերտերականությանը, մարքսիզմը որպես անփոփոխ, քարացած դոգմաների միակցություն ներկայացնելու վնասակար փորձերին։ Ընկեր Ստալինը սուր ծաղրի ենթարկեց նրանց, ովքեր հանուն մարքսիզմի տառի պատրաստ են աչքաթող անել նրա էությունը, ովքեր մարքսիզմի ստեղծագործական կիրառումն ուզում են փոխարինել նրա առանձին եզրակացությունների ու ֆորմուլների տիրացուական սերտումով։

Ընկեր Ստալինը, հանձին Մառի և նրա աշակերտների, դիմակազերծ արեց այն մարդկանց, որոնք ձգտում են սովետական գիտության մեջ արմատավորել նրան խորթ բարքեր, ճնշել գիտական քննադատությունը և ինքնաքննադատությունը, արակչեևյան միջոցներով հաշիվ տեսնել նրանց հետ, ովքեր չէին դավանում Մառի «նոր ուսմունքի» դոգմաները։

Ընկեր Ստալինի ցուցումը կարծիքների պայքարի և քննադատության ազատության վերաբերյալ՝ հանդիսանում է սովետական գիտական մտքի հետագա ծաղկման կարևորագույն պայմանը։

Ընկեր Ստալինի աշխատությունը բացառիկ դեր խաղաց մեր ռեսպուբլիկայի գաղափարական, գիտական կյանքում։ Նա ստեղծեց բոլոր հնարավորությունները Մառի աշակերտների վնասակար հնարանքները մերկացնելու և լեզվաբանության մեջ նրանց մտցրած արակչեևյան ռեժիմը վերացնելու համար։

Իրենց ուսուցչի հակամարքսիստական ֆորմուլները անցկացնելով, Ա. Ղարիբյանը և նրա համախոհները, պատմական փաստերի աղաղակող ֆալսիֆիկացիայի գնով «ապացուցում» էին հին հայկական գրական լեզվի՝ գրաբարի դասակարգային բնույթը, հայոց լեզվի զարգացման մեջ «պայթյուններ» էին հնարում, հայկական միասնական ազգությանը երկու լեզու վերագրում՝ այսպես կոչված արևմտահայ լեզուն ինքնուրույն լեզու հռչակելով։

«Նոր ուսմունքին» նախորդող ամբողջ լեզվաբանության նկատմամբ մառական նիհիլիզմով համակված՝ նրանք մեծամտորեն նշավակում էին պատմահամեմատական մեթոդը, որպես «իդեալիստական», «ռասիստական» մեթոդ և ժխտում էին տարբեր ազգությունների լեզվական ազգակցության հարցի ուսումնասիրության անհրաժեշտությունը, մինչդեռ ընկեր Ստալինը նշում է, որ «լեզվական ազգակցության ուսումնասիրությունը կարող էր մեծ օգուտ բերել լեզվաբանությանը, լեզվի զարգացման օրենքները ուսումնասիրելու գործում» («Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 75)։

Մառի հետևորդները Հայաստանում՝ զինված լեզվի դասակարգային, վերնաշենքային բնույթին վերաբերող կեղծ տեսություններով, ձգտում էին հայոց լեզվի քերականությունն ու հիմնական բառային ֆոնդը ենթարկել «խիստ զտման»՝ «խորթ, դասակարգային» տարրերից, քաոս ստեղծելով հայոց լեզվի շինարարության պրակտիկայում։

Ղեկավարվելով լեզվի մաքրության մասին մառական խառնաշփոթ, հակասական ու սխալ «սահմանումներով», անտեսելով հայերենի քերականությու-

նը, նրա զարգացման ներքին օրենքները, նրա ողջ առանձնահատկությունը, Գ. Սևակը և ուրիշները աշխատում էին «հարստացնել» այն, հնարելով նոր, քիչ արտահայտիչ, անբարեհնչուն, նյութի իմաստային կողմը աղավաղող բառեր, արտահայտություններ, ոճեր։ Դրան կարող է իլյուստրացիա ծառայել «Օվգենի Օնեգինի» հայերեն անորակ թարգմանությունը, որը կատարել է ընկ. Սևակը։

Մառի սխալ գրույթները լեզուների խաչաձևման մասին, «դասակարգային» և տերիտորիալ բարբառների տարբերությունների մասին, վերջիններիս և համաժողովրդական ու համազգային լեզուների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների մասին, ոչ միայն արմատապես աղավաղում էին հայոց լեզվի ծագման և զարգացման պատմությունը, այլև խանգարում էին հայոց լեզվի հետագա զարգացմանը, խանգարում էին նրա հարստացման իսկական աղբյուրների ու միջոցների բացահայտմանը։

Մառի և նրա աշակերտների հակամարքսիստական տեսակետները շահմանափակվեցին լեզվաբանության շրջանակներով։ Նրանք զգալի վնաս հասցրին նաև հայագիտության այլ ճյուղերին։ Մառականները աղավաղում էին մասնավորապես հայ ժողովրդի ծագման հարցը, փորձելով հայ ժողովրդի էթնոգենեզը բացատրել իրենց լեզվաբանական մեռյալ ու սնանկ դոգմաների համաձայն։

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության լույս ընծայումից հետո անցած մեկ տարվա ընթացքում Հայաստանի գիտական հիմնարկները ՀԿ(բ)Պ Կենտկոմի ամենօրյա ղեկավարությամբ ու օժանդակությամբ զգալի աշխատանք կատարեցին սովետահայ լեզվաբանության, գրականագիտության, պատմագրության և այլ բնագավառների հաղցերի քննարկման ու լուսաբանման ուղղությամբ։ Գիտա-հետազոտական հիմնարկներում կազմակերպվեցին հատուկ դիսպուտներ, նվիրված լեզվաբանության հարցերին։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնած նիստում քննության առնվեցին հայոց լեզվի մաքրության և ժամանակակից հայերենի լեզվաշինարարության հարցերը, իսկ Գրականության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում քննարկվեցին գրականագիտության խնդիրները ընկեր Ստալինի աշխատությունների լույսի տակ։

Պատմության ինստիտուտում քննության առարկա դարձավ հայ ժողովրդի ծագման պրոբլեմը, կապված հայոց լեզվի առաջացման խնդրի հետ։

Վերոհիշյալ դիսկուսիաների ընթացքում պարզաբանվեցին մի շարք վիճելի հարցեր։ Ռեսպուբլիկայի լեզվաբաններին, գրականագետներին, պատմաբաններին և այլ բնագավառների աշխատողներին հաջողվեց հասնել կոնկրետ արդյունքների։

Տեսական և գործնական մեծ նշանակություն ունեցավ մեր Ակադեմիայի Լեզվի ինստիտուտի կազմակերպած դիսկուսիան։[1] Այդ դիսկուսիայում Մառի և նրա աշակերտների տեսակետները ենթարկվեցին խիստ քննադատության։ Դրսևորվեց արևմտահայ լեզուն ինքնուրույն լեզու դարձնելու վարձերի լիակատար սնանկությունը։ Դիսկուսիայում ելույթ ունեցող ընկերներից շատերը համոզիչ կերպով ցույց տվին գրաբարը և տեղական բարբառները հայոց լեզվի

[1] Դիսկուսիայի նյութերը կտպագրվեն «Տեղեկագրի» հաջորդ համարում։

զարգացման հիմնական աղբյուր դարձնելու փորձերի վնասակարությունը, բացահայտեցին հայոց լեզուն հնաբանություններով, արդեն մեռած բառերով և արտահայտություններով, նրա քերականական կառուցվածքին խորթ, անկենդան նորամուծություններով աղտոտելու անթույլատրելիությունը։

Դիսկուսիայի մասնակիցներից շատերը պաշտպանում էին այն ճիշտ միտքը, թե մեր լեզվի հետագա զարգացման հիմքը հանդիսանալու է առաջին հերթին մեր բուռն կերպով զարգացող, հարուստ, բազմակողմանի սոցիալիստական պրակտիկան, որն ամեն օր ծնում է նոր երևույթներ, հասկացողություններ ու պատկերացումներ, որոնք չեն կարող իրենց բառային արտահայտությունը գտնել գրաբարի և բարբառների սահմանափակ բառային նյութի մեջ։

Դիսկուսիան բացահայտեց հայոց լեզուն ՍՍՌՄ ժողովուրդների լեզուների և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի լեզվի բարերար ազդեցությունից «սահմանագծելու» փորձերի ռեակցիոն բնույթը և ցույց տվեց, որ այդ փորձերը արդյունք են ազգային սահմանափակվածության։ Ճիշտ էր նշվում դիսկուսիայում, որ խոսելով հայ լեզվի զարգացման, ինչպես և ՍՍՌՄ ամեն մի ժողովրդի լեզվի զարգացման մասին, չի կարելի մոռանալ, որ մեր երկրում սոցիալիստական հասարակակարգի հաստատումով բացվեցին, այդ լեզուների զարգացման և համագործակցության կարգով, հարստացման լայն հնարավորություններ։

Դիսկուսիան ցույց տվեց նաև, որ որոշ լեզվաբաններ (Դ. Սեվակ, Է. Աղայան և ուրիշներ) ընկեր Ստալինի աշխատությունից դեռևս չեն արել բոլոր անհրաժեշտ հետևությունները և լրիվ չափով չեն վերանայել իրենց սխալ դրույթները։ Այդ էին վկայում դիսկուսիայում նրանց ունեցած ելույթները, որոնք ենթարկվեցին արդարացի քննադատության։

Ընկեր Ստալինի լեզվաբանական աշխատությունները հնարավորություն տվին մեր գրականագետներին վերանայել մի շարք հնացած և սխալ դրույթներ և նշել սովետահայ գրականության հետագա զարգացման ուղիները։

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնած նիստում վճռական քննադատության ենթարկվեցին սոփեստական, թալմուդիստական հնարանքները, որոնց օգնությամբ մի շարք փիլիսոփաներ և գրականագետներ փորձում են կասկածի տակ առնել գրականության և արվեստի վերնաշենքային բնույթը։ Ելույթ ունեցող ընկերներից շատերը ցույց տվին, որ այդ հնարանքները ըստ էության հակասում են իդեոլոգիական հարցերի մասին ՀամԿ(բ)Պ Կենտկոմի պատմական որոշումներին և կարող են թուլացնել մեր պայքարը դաղափարազրկության, ֆորմալիզմի, բուրժուական օբեկտիվիզմի ամեն տեսակ արտահայտությունների դեմ։

Վիճաբանություններին մասնակցող ընկերները վերնաշենքի ակտիվ-ծառայական դերի մասին ընկեր Ստալինի ուսմունքի լույսի տակ դրեցին սովետահայ գրականության զարգացման համար կարևոր մի շարք խնդիրներ։ Նրանք նշում էին գրական գործոնների իդեական հագեցվածության անհրաժեշտությունը, դեպի գրական ձևը, գրական վարպետությունը, կոմպոզիցիայի և ոճի հարցերը եղած արհամարհական վերաբերմունքի հաղթահարման անհրաժեշտությունը։ Դիսկուսիային մասնակցողներից շատերը սուր կերպով դրեցին սոցիալիստական պրակտիկայի կենսական, ակտուալ հարցերից դեպի պատմության խորքերը, արդեն լուծված և լուսաբանված հարցերը փախուստ տալու՝ մինչև վերջ դեռ չհաղթահարված տենդենցների դեմ պայքարելու ան-

հրաժշտությունը։ Այդ տենդենցները արտահայտվում են ոչ միայն դեղարվեստական դրականության մեջ, այլ նաև գրական քննադատության ասպարեզում։

Սրանք են ընկեր Ստալինի՝ հանճարեղ աշխատության յուրացման և նրա դրույթների կենսագործման առաջին արդյունքները հայագիտության տարբեր մարզերում։ Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ սա հանդիսանում է ընկեր Ստալինի աշխատության լույսի տակ գիտական պրոբլեմների խորը վերանայման և լուծման սկիզբը միայն։

Այդ տեսակետից չի կարելի չնշել, որ մեր Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի մի շարք հիմնարկներ անհրաժեշտ լրջությամբ չեն զբաղվում այդ կարևորագույն հարցով։ Բավական է ասել, որ փիլիսոփայության սեկտորը անցած տարվա ընթացքում չի կազմակերպել ընկեր Ստալինի աշխատության քննարկումը և շատ թույլ է մասնակցել այն դիսկուսիային, որ ծավալվեց բազիսի և վերնաշենքի հարցի մասին։ Սեկտորի նոր ղեկավարությունը պետք է ամենակարճ ժամանակամիջոցում վերացնի այդ անթույլատրելի դրությունը։

Արվեստի սեկտորի աշխատակիցները մինչև այժմ մեր գիտական հասարակայնությանը չտվեցին որևէ քիչ թե շատ լուրջ ուսումնասիրություն սովետահայ արվեստի առջև դրված ակտուալ հարցերի լուսաբանման մասին, կապված ընկեր Ստալինի աշխատության հետ։ Բնորոշ է, որ արվեստի սեկտորը ոչ մի մասնակցություն չունեցավ լեզվի և գրականության վերաբերյալ դիսկուսիաներին, ինչպես նաև «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության հրատարակման տարեդարձին նվիրված սեսիային։ Ըստ երևույթին արվեստի սեկտորը մինչև այժմ լուրջ հետևություն չի արել այն սուր քննադատությունից, որին ենթարկվեց նրա աշխատանքը Հայաստանի Կոմունիստական պարտիայի 15-րդ համագումարում։

Մեր Ակադեմիայի Լեզվի, Գրականության և Պատմության ինստիտուտները չպետք է բավարարվեն նրանով, ինչ արդեն արել են ընկեր Ստալինի աշխատության ուսումնասիրման և նրա հանճարեղ գաղափարների կիրառման ուղղությամբ։

Իր բազիսը ամրապնդելու գործում վերնաշենքի ակտիվ դերի մասին ընկեր Ստալինի ուսմունքից անմիջապես հետևում է, որ սոցիալիստական բազիսի ամրապնդումը հանդիսանում է սոցիալիստական վերնաշենքի կենսական խնդիրը, որի անբաժանելի մասն է կազմում սովետական գիտությունը։

Մեր գիտա-հետազոտական ինստիտուտների աշխատանքի արդյունավետության չափանիշը հանդիսանում է այն, թե որքանով են նրանք մասնակցում կոմունիզմի հաղթանակի գործին։ Բավական է միայն, որ նրանցից մեկն ու մեկը անհրաժեշտ ակտիվություն չցուցաբերի այդ գործում, որպեսզի իրեն դատապարտի անխուսափելի ձախողման և ապացուցի իր անօգտակարությունը։

Այդ ճշմարտությունը, որ իր փիլիսոփայական խոր հիմնավորումն է գտել ընկեր Ստալինի աշխատության մեջ, պարտավորեցնում է մեր գիտա-հետազոտական հիմնարկներին՝ լրջորեն վերանայել իրենց պլանները, կենտրոնացնել իրենց աշխատակիցների ջանքերը այն խնդիրների լուծման վրա, որոնք կենսական նշանակություն ունեն սովետական հասարակական և պետական կարգի ամրապնդման համար, սոցիալիստական էկոնոմիկայի և կուլտուրայի համար։

Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի 15-րդ համագումարը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի առաջ ամենայն սրությամբ դրեց պատմության, փիլիսոփայության, գրականության, արվեստի սովետական ժամանակաշրջանի հարցերով ավելի լրջորեն զբաղվելու անհրաժեշտությունը։

Միանգամայն անթույլատրելի է, որ մեր որոշ գիտա-հետազոտական հիմնարկների սովետական ժամանակաշրջանի պատմության, գրականության, արվեստի սեկտորները ապահովված չեն բավականաչափ որակյալ, փորձված կադրերով։ Գաղտնիք չէ, որ մեր Ակադեմիայի իսկական անդամներից շատերը՝ պատմաբանները, գրականագետները և լեզվաբանները, ինչպես նաև գիտությունների դոկտորներից շատերը իրենց գիտա-հետազոտական աշխատանքներում 19-րդ դարից այս կողմ չեն անցնում։

Մինչև հիմա էլ որոշ մարդկանց մոտ գոյություն ունի այն տարօրինակ, եթե չասենք անմիտ ու վնասակար «թեորիան», որի համաձայն այն ամենը, ինչ վերաբերում է սովետական ժամանակաշրջանին, իբր թե կրում է «հրապարակախոսական-պրոպագանդիստական» և ոչ գիտական բնույթ։

Կարելի էր լրջորեն չխոսել անցյալի առանձին մոլեռանդ երկրպագուների այդ տարօրինակ «ճաշակների» և «գնահատականների» մասին, եթե մենք չունենայինք փաստեր, որ մեր որոշ ինստիտուտներում դեռ մինչև վերջ չի հաղթահարված հին պատմության և կուլտուրայի գերագնահատումը ի հաշիվ այժմեական թեմատիկայի։

Միանգամայն անհանդուրժելի է այն փաստը, որ Պատմության ինստիտուտի 23 գիտական աշխատողներից Հայաստանի սովետական շրջանի պատմության սեկտորում աշխատում են ընդամենը երկու հոգի։

Չնայած վերադաս օրգանների բազմաթիվ ցուցումներին, Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը մինչև այժմ դեռևս չի հրատարակել Հայ գրականության պատմության վեցհատորյակի 6-րդ հատորը՝ նվիրված սովետահայ գրականությանը, չի հրատարակել նաև միջնակարգ դպրոցի դասագրքի 3-րդ հատորը՝ դարձյալ նվիրված սովետահայ գրականությանը։ Այս երկու աշխատությունների համար սահմանված բոլոր ժամկետները վաղուց անցել են։

Մեր գիտական հասարակայնությունը իրավունք ունի սպասելու Հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյից և մեր Ակադեմիայի նախագահությունից, որպեսզի նրանք դիմեն կտրուկ միջոցների և ապահովեն ժամանակակից, սովետական թեմատիկայի արժանի տեղը մեր գիտա-հետազոտական պլաններում և նրանց ժամանակին կատարումը։

Չպետք է անտեսել անցյալի պատմության և հին կուլտուրայի մարքսիստական-լենինյան ուսումնասիրության նշանակությունը. մեր կադրերը զբաղվել են և պետք է զբաղվեն դրանով։ Սակայն անցյալի ուսումնասիրությունը չպետք է ընթանա ի վնաս սովետական պրակտիկայի ուսումնասիրության և տեսական ընդհանրացման։ Որպեսզի այդ կատարվի, անհրաժեշտ է, որ մենք մեր կադրերի, մեր միջոցների առավել մեծ մասը հատկացնենք ամենաակտուալ թեմաների մշակմանը։

Միաժամանակ անհրաժեշտ է վերջ տալ այն վնասակար պրակտիկային, երբ բազմաթիվ ակտուալ հարցեր լուսաբանվում են ոչ բավարար գիտական խորությամբ, իբր սովետական թեմատիկային նվիրված որոշ աշխատություն-

ներ էմպիրիկ նկարագրական բնույթ են ունենում, չեն պարունակում տեսական խորը ընդհանրացումներ։ Մեծ սխալ կլիներ գիտական աշխատողների այդ կարգի թերությունները հանդուրժել միայն այն պատճառով, որ նրանք զբաղվում են սովետական թեմատիկայով։ Ընդհակառակը, մենք պարտավոր ենք պահանջել այժմեական պրոբլեմների ամենալուրջ, գիտական-տեսական լուսաբանումը։

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատությունը սովորեցնում է մեզ, թե ինչպես համարձակ և ստեղծագործական ձևով պետք է լուծել սովետական գիտության ամենաակտուալ ու ամենաբարդ հարցերը։ Մարքսիստական-լենինյան ուսումնասիրության այդ հոյակապ օրինակը դաստիարակում է մեր մեջ նորի զգացումը, գիտության ու կյանքի մեջ իր դարն ապրած ամեն մի դրույթի հանդեպ անհաշտ վերաբերմունք։ Նա կոչում է մեզ անխնա պայքարի իդեալիզմի և մետաֆիզիկայի դեմ, բուրժուական «կոնցեպցիաների» և «տեսությունների» դեմ, ամեն տեսակ դոգմատիզմի և սխոլաստիկայի դեմ։